ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

<< >> _____ 2014թ. ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16

N: _____ հեռ. (0312) 3-26-10, ֆաքս (0312) 3-50-77

ՈՒՂԵՐՁ

ԳԻՏԵԼԻՔԻ, ԳՐԻ ԵՎ ԴՊՐՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Սիրելի դպրոցականներ, ուսանողներ. Հարգելի ուսուցիչներ և ծնողներ.

Ի սրտե շնորհավորում եմ Ձեզ սեպտեմբերի 1-ի՝ Գիտելիքի, գրի և դպրության օրվա և նոր ուսումնական տարվա մեկնարկի կապակցությամբ: Առանձնահատուկ ուզում եմ շնորհավորել նրանց, ովքեր նոր ուսումնական տարում առաջին անգամ են ոտք դնելու դպրոց և բարձրագույն ուսումնասկան հաստատություն:

Այսօր՝ Գիտելիքի, գրի և դպրության օրը, Շիրակի մարզի հազարավոր աշակերտներ կրկին մուտք են գործելու նորոգված, կահավորված դպրոցներ, որոնք վերջին տարիներին հագեցվել են նոր գույքով, համակարգիչներով, ինտերնետ կապով: Մեր պետականության կայացման առաջին իսկ տարիներից առանձնահատուկ է եղել պետության հոգածությունը՝ դպրոցին ու դպրոցաշինությանը ցուցաբերած նպատակասլաց ու հատուկ վերաբերմունքով:

Համոզված եմ, որ կրթական ոլորտի բարեփոխումներն ու արդիականացումը առաջիկայում տալու են լուրջ արդյունքներ, ուստի մեր մանկավարժներին հորդորում, պահանջում և խնդրում եմ, Ձեր շնորհակալ գործը կատարեք նվիրումով, քանզի ինչպիսի դպրոց կունենանք առաջիկայում, այնպիսին էլ կլինի մեր վաղվա քաղաքացին:

Կրկին անգամ շնորհավորելով այս գեղեցիկ և հիշարժան օրվա կապակցությամբ, նոր ուսումնական տարում բոլորիդ մաղթում եմ քաջառողջություն և անսահման հաջողություններ:

Ֆ. ՅՈԼԱԿՅԱՆ